

# ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

## ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ տարեկան Անդամական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, 20 Փետրուար 1983-ին, յետ միջօրէի ժամը 2.30-ին տաճարին մէջ ի ներկայութեան 75 տրատու անդամներու:

Ժողովին կանոնաւորութիւնը ստուգուելէ ետք, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Բարթող Ա. Քհնյ. Խրքամեան ժողովին բացումը կատարեց աղօթքով, ապա՝ Տղթ. Յարութիւն Արզումանեան, ատենապետը ծխական Խորհուրդին, շնորհակալութիւն յայտնեց Հոգեւոր Հովիւին, ծխական Խորհուրդոյ անդամներուն եւ Եկեղեցւոյ ենթակայ յանձնախումբերու գործակիցներուն, իրենց տարած կարեւոր աշխատանքին համար եւ ապա հրաւիրեց ժողովականները կատարելու օրուան դիւանի ընտրութիւնը:

**Դիւանի ԸնՏՐՈՒԹԻՒՆ.** - Անդամներու միաձայնութեամբ դիւանի ատենապետութեան պաշտօնին կոչուեցաւ Պրն. Արթո Պամամեան, իսկ քարտուղարութեան պաշտօնին՝ Օր. Յասմիկ Մանկասարեան:

**Ընթերցումը նախորդ ծիսկան ԱՆԴՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ.** - Դիւանի

Քարտուղար՝ Օր. Յասմիկ Մանկասարեան կարդաց նախորդ տարուան Ընդհ. Ժողովի ատենագրութիւնը, որը վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

**ԱՊՐԱՄԱՐՉՈՒՄ ԵՒ ՎՄԻԲՐԱՅՈՒՄ ՆԻԻԹԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆՑ.** -

Նկատի ունենալով թղթատրութեան սակերու անհամեմատ քարձրացումը եւ նաեւ ժամանակի սղութիւնը, ծխական Խորհուրդը յարմար նկատած էր Եկեղեցւոյ տարեկան տեղեկագրութեան գրքոյկը նախապէս չուղարկել անդամներուն, եւ բաժնել զայն տեղւոյն վրայ: Ժողովականներուն փախաքին ընդառաջելով որոշուեցաւ Եկեղեցւոյ տարբեր մարմիններու տեղեկագրութիւնները մի առ մի քննարկել: Դիւանի Ատենապետը հրաւիրեց Հոգեւոր Հովիւը ներկայացնելու իր տեղեկատուութիւնը, որը վաւերացուեցաւ զնահատական քարձր արտայայտութիւններով:

**Ծիսկան ԽՈՐՀՈՒՐԴՈՅ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ.** - Շնորհակալական խօսքեր ու զնահատական քարձր արտայայտութիւններ ուղեւեցան Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ ծխական Խորհուրդին յատկապէս եկեղեցաշէնքի բարենորոգութեան աշխատանքները լրիւ կատարած ըլլալուն համար: Այս առթիւ շնորհակալութիւն յայտնուեցաւ բոլոր անոնց, որոնք նիւթական լայն օժանդակութեամբ սատարած էին նորոգութեան աշխատանքներուն: Տեղեկատուութիւնը վաւերացուեցաւ զնահատական արտայայտութիւններով:

# ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

ՄՈՆՔԻՆԷԱԿ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ  
-Շար. 2-

**ԲՈՒՐԱՏԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ.** - Պրն. Օննիկ Գալուստեան խօսք առնելով դիտել տուաւ թէ պիտի փափաքէր, որ ԲՈՒՐԱՏԱՆԻ ԼՐԻԼ անձնակազմի անունները յիշուին տարեկան տեղեկագրութեան մէջ: Պրն. Պերճ Ֆազլեան, սատասխանատու խմբագիրը պարբերաթերթին, յայտնեց թէ թերացում մը եղած եւ թէ յաջորդ տարի պիտի սրբագրուի: Գնահատական խօսքեր յայտնուեցան թերթի անձնակազմին, որոնց շնորհիւ էր, որ ԲՈՒՐԱՏԱՆը իր բովանդակութեամբ աւելի մոխ եւ ներկայանալի դարձած էր: Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց ԲՈՒՐԱՏԱՆԻ տեղեկագրութիւնը:

**ԿՈՄԻՏԵԱՄ ԴՊՐԱՅ-ԵՐԳՉԱՅՈՒՄԻ ԿՈՄԻՏԵԱՄ** տեղեկատուութիւն. - Ժողովը գնահատանքով արտայայտուեցաւ Դպրաց Դասու տարած օրինակելի ու բծախնդիր աշխատանքին համար, շնորհակալութիւն յայտնուեցաւ Ս. Խորանին սպասարկող Սարկաւազաց Դասու անդամներուն, Դպրապետին, երգեհոնահարներուն եւ անխտիր բոլոր մասնակցողներուն: Տեղեկատուութիւնը վաւերացուեցաւ բարձր գնահատանքով:

**ՇԱՐԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ.** - Շարաթօրեայ Վարժարանը նիւթական եւ բարոյական զոհողութիւններ պահանջող մարմին մըն է, իր տարած աշխատանքները անգնահատելի են: Շնորհաւորութեան արժանացան այս զործին ծառայող իւրաքանչիւր անդամը վաւերացնելով տարեկան տեղեկագիրը:

**ԵԿԵՂԵՑԱՄԷՐ ՏԻԿԱՄՑ ԵՒ ՀՈԳԱՏԱՐ ՄԱՐՄԻՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ.** - Յաջորդաբար ըննարկուեցան Տիկնանց զոյգ մարմիններու տարեկան տեղեկատուութիւնները: Երկու մարմիններն ալ իրենց կարգին տարած էին ծաւալուն աշխատանք եւ որոնց շնորհիւ ապահոված էին նիւթական շօշափելի գումարներ: Յատկապէս Հոգատար մարմինը որ ղեռ մէկ տարուան կեանք ունէր տարած էր աշխոյժ զործունէութիւն: Երկու մարմիններու ալ տեղեկատուութիւնները վաւերացուեցան բացառիկ գնահատանքներով:

**ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՉՆԱՅՈՒՄԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ.** - Վերակազմեալ սոյն Յանձնախումբը այս տարեշրջանին համերաշխօրէն կատարած էր իր աշխատանքները եւ յառաջիկայ տարուան ընթացքին լայն ծրագիրներով պիտի ներկայանայ մեր համայնքին: Նոյնութեամբ վաւերացուեցաւ իրենց տեղեկագրութիւնը:

**ԵՐԻՏԱՄԱՐԴԱՅ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ -ՀԵՆԿԱ-** - Եկեղեցւոյ Երիտասարդաց Յանձնախումբը նոր վերակազմուած կը տանէր իր աշխատանքները: Գնահատական խօսքեր ուղղուեցան Երիտասարդացը

# ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԿՉ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

## ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻԿՉ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ -Շար. էջ. 3-

վերակազմելու աշխատանքը տանողներուն, յատկապէս ծխական Խորհուրդին եւ մասնաւորապէս Պրն. Արթօ Պասմաճեանին, որ մղիչ ուժը հանդիսացած էր սոյն Կազմակերպութեան վերահաստատման աշխատանքներուն մէջ: Ապա, տեղեկատուութիւնը վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

**ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԵԱՅ ԶՆՆԱՐԿՈՒՄ ԵՒ ՎԱՌԵՐԱՑՈՒՄ.** - Ժողովը մի քանի վայրկեան դադար տուաւ, որպէսզի ժողովականները քննեն ծխական Խորհուրդի եւ իր յարակից Մարմիններու նիւթական հաշուետուութիւնները: Տասը վայրկեանի դադարէ մը ետք, մի առ մի քննարկուեցան կարգաւ բոլոր հաշուետուութիւնները, որոնք կանոնաւոր կերպով արձանագրուած էին տեղեկատուութեանց զրքոյկին մէջ: Պրն. Անդրանիկ Զատրճեանի հարցումներէն կը պարզուէր, թէ կանոնաւոր եւ բժախնդրութեամբ ներկայացուած էին բոլոր մուտքի եւ ելքի հաշիւները: Ապա Պրն. Վահէ Բէթլի ներկայացուց հաշուեքննիչ Մարմին տեղեկատուութիւնը որ ցոյց կուտար հաշիւներու կանոնաւորութիւնն ու ճշգրտութիւնը: Ժողովականները միաձայնութեամբ եւ զնահատանքով վաւերացուցին ներկայացուած ծխական Խորհուրդէն սկսեալ բոլոր յարակից Մարմիններու հաշուետուութիւնները:

Յառաջիկայ տարուան նախահաշիւի ներկայացման ընթացքին, հարց տրուեցաւ թէ Առաջնորդարանի տուրքը զգալի բարձրացում կրած է: Այս առնչութեամբ Տոքթ. Արշաւիր Կէօնճեան, խօսք առնելով, դիտել տուաւ, թէ երբ Գանատան առանձին Առաջնորդութիւն ունենայ, այս ծախսերը զգալիօրէն կրնան բարձրանալ: Ապա՝ միաձայնութեամբ վաւերացուեցաւ, պահպանողական բնոյթով պատրաստուած 1983 տարուան նախահաշիւը:

**ԳԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՅ ՀԱՐՑ.** - Գանատայի անջատ թեմ ըլլալու կապակցութեամբ, Պրն. Վահէ Բէթլի կարգաց Արեւելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի այս ուղղութեամբ յղած նամակի պատճէնը, որուն մէջ յստակօրէն կը պարզուէր Գանատայի Առաջնորդութեան վերաբերեալ կարգ մը հարցերու լուծումն ու ուղղութիւնը: Ապա խօսք տրուեցաւ Գործադիր Մարմնի ատենապետ Տոքթ. Կէօնճեանին, որ լուսաբանէ ժողովականները Գանատան առանձին առաջնորդութիւն ունենալու ծրագրին շուրջ: Տոքթ. Կէօնճեան դիտել տուաւ, թէ Առաջնորդական վարչակազմի ստեղծումը նիւթական մեծ պարտաւորութիւններ կը բերէ մեր համայնքին եւ թէ զաղութներ պէտք է զհտակցին եւ բերեն իրենց բաժինը: Սակայն, այս բոլորէն անկախ, մենք պէտք է պահենք մեր կապը Ամերիկայի Առաջնորդարանի հետ: Յիշուեցաւ նաեւ կարեւորութիւնը Գանատական Թեմի պաշտօնացման -ինքորփորէյթ-ընելու եւ Պատգամաւորական ժողովը զուժարելու մասին:

**ԹԵԼԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆՔ.** - Տոքթ. Յովհաննէս Պալապանեան առաջարկեց, որ յառաջիկայ տարի Ընտրողական Յանձնախումբը աւելի բժախնդրութեամբ պատրաստէ երկպատիկ ցանկ մը. ապա շնորհակալութիւն

# ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

ՄՈՆՈԲԵԱԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ  
- Շար. էջ 4-

յայտնեց, յանուն ՀԲԸՄ-ի, Եկեղեցւոյ Հովիւին, ծխական Խորհուրդին, Տիկ-  
նանց Յանձնախումբին եւ Շարաթօրեայ Վարժարանի Խնամակալութեան, որոնք  
հիւրասիրած եւ դիւրութիւններ ընծայած էին Հոլանտայէն ներգաղթած հայե-  
րուն: Պրն. Պերժ ֆազլեան առաջարկեց, որ յառաջիկայ տարուան ժողովը,  
կարեւորութեան սահմաններուն մէջ, տեղի ունենայ մէկ օրուան ընթացքին,  
եւ ոչ թէ քանի մը տարիներէ ի վեր որդեգրուած երկու անգամի ձեւը:  
Այս հարցը յառաջիկայ տարուան ծխական Խորհուրդին ուշադրութեան յանձնը-  
լեցաւ: Ներկաներուն կողմէ հարց բերուեցաւ երկու տարիէն աւելի իրենց  
տուրքերը չվճարող անդամներու պարագան: Սակայն այս հարցը կանոնագիր-  
ծրագրի վերաբերող պարագայ մըն է: Եթէ ծուխեր փափաքին կանոնագիր-ծր-  
ագրի մէջ փոփոխութիւն կատարել, պարտին երկու ամիս առաջ, Պատգամաւո-  
րական ժողովէն, նոր փանածել մը ներկայացնել: Պրն. Գէորգ Փելթեքեանի  
կողմէ առաջարկուեցաւ, որ յառաջիկայ տարուան Ընտրողական Մարմնի գործը  
մասամբ դիւրացնելու համար, նուազագոյն ընտրութիւններէն երկու ամիս  
առաջ, ԲՈՒՐՄՍԱՆԻ միջոցաւ անդամներուն կոչ ուղղել, որպէսզի ամէն անոնք  
որոնք կը փափաքին թեկնածու ներկայանալ որեւէ Մարմնի, հաճին իրենց ա-  
նունները արձանագրել տալ: Այս պարագան եւս կը յանձնուի յաջորդ տարուան  
ծխական Խորհուրդին ուշադրութեան:

Օրակարգի հարցերը, բացի ընտրութիւններէ վերջացած ըլլալով, Դիւանի  
ատենապետը հրաւիրեց Տէր Հայրը, որ իր օրհնութիւններով փակէ ժողովը:  
Տէր Հայրը, Արժ. Տ. Բարթող Ա. Բինյ. Խրքածեան իր ուրախութիւնը յայտ-  
նեց ժողովականներու ցոյց տուած հասունութեան եւ ապա Պահպանիչով փակեց  
ժողովի այս առաջին մասը:

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.** - Գանատայի անշատ թեմի յաւելեալ երկու Պատգամաւորներու,  
ծխական Խորհուրդի շրջանաւարտ հինգ անդամներու, Ընտ-  
րողական Յանձնախումբի հինգ եւ Հաշուեքննիչ Մարմնի երեք անդամներու  
ընտրութիւնները տեղի ունեցան Կիրակի, 27 Փետրուար 1988, ժամը կէսօրէ  
ետը 1-5 միջեւ Եկեղեցւոյ Գարիպեան Սրահին մէջ, որուն մասնակցեցան Եկե-  
ղեցւոյ 160 տրատու անդամները: Ընտրութիւնները տեղի ունեցան հսկողու-  
թեամբ ծխական Խորհուրդոյ, Ընտրողական Յանձնախումբի եւ Հաշուակալ Մարմնի  
անդամներուն ամենայն կանոնաւորութեամբ եւ բժախնդրութեամբ: Եկեղեցւոյ  
Դիւանապետութիւնը պատրաստած էր տպագրեալ քուէաթուղթեր եւ այլ մանրա-  
մասնութիւններ: Ժամը 5-ին, քուէարկութիւնը վերջացած համարուեցաւ,  
սնտուկները փակուելէ ետք, Դիւանի Ատենապետի գլխաւորութեամբ Ընտրողական  
Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ Մարմնի անդամներ առանձնանալով միասնաբար  
կատարեցին քուէներու համրանքը, ըստ որոնց տեղեկատուութեան ընտրութիւնների  
արդիւնքները վերջ գտան հետեւեալ արդիւնքներով.